

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով սոցիալական փաթեթի շահառուների (աշխատողների) բազմաթիվ դիմումները սոցիալական փաթեթի շրջանակներում ուսման վճարի փոխանցումների վերաբերյալ՝ խնդրում ենք ուսումնասիրել նշված խնդիրը և ՀՀ պետական ԲՈՒՀ-երից պահանջել առաջնորդվել ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման հիման վրա տրված ՀՀ կրթության և գիտության նախարարի ս.թ. փետրվարի 19-ի հանձնարարականով՝ սոցիալական փաթեթի շրջանակներում ուսման վճարի ծառայության համար փոխանցումներ իրականացնելու դեպքում այդ վճարումներն ամսական կտրվածքով (մինչև տվյալ բյուջետային տարվա ավարտը) ընդունելու վերաբերյալ, այդ թվում՝ վերջին կուրսում սովորող ուսանողների դեպքում: Տվյալ խնդիրը մեծամասամբ առկա է վերջին կուրսում սովորող ուսանողների շրջանում, երբ ԲՈՒՀ-երի կողմից սոցիալական փաթեթի շրջանակում մասնակի (պարբերական) վճարման գործընթացը մերժվում է:

Հարկ ենք համարում նշել, որ սոցիալական փաթեթի հատկացման գործընթացը մասնակի վճարման տեսանկյունից նվազ բարենպաստ պայմաններ չի նախատեսում վերջին կուրսում սովորող ուսանողների համար: Այսինքն՝ ՀՀ կառավարության 2012

թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 3-րդ հավելվածի 2.4.9. կետի համաձայն՝ բանկը պարտավորվում է սոցիալական փաթեթի որևէ ծառայությունից օգտվելու դեպքում աշխատողի կողմից վճարման հանձնարարագիր ստանալու դեպքում յուրաքանչյուր ամիս՝ հանձնարարագրում նշված օրը հանձնարարագրով նշված գումարի չափով փոխանցում իրականացնել նշված կազմակերպությանը: Վերոհիշյալ կետով նախատեսված հանձնարարագրով առաջնորդվելու դեպքում, եթե տվյալ անձը ներկայացել է բանկ հանձնարարագիրը չեղյալ համարելու նպատակով, բանկը պետք է տվյալ ծառայությունից չօգտվելու վերաբերյալ հիմնավոր փաստաթուղթ պահանջի ֆիզիկական անձից (օրինակ՝ վճարումը ստացող ընկերության կողմից տրված տեղեկանք՝ վճարումների դադարեցմանը դեմ չլինելու վերաբերյալ):

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ ուսման վճարի ծառայությունից օգտվելու դեպքում, եթե աշխատողը հանձնարարագիր է ներկայացրել սոցփաթեթի հաշիվը սպասարկող բանկին՝ տվյալ ուսումնական հաստատությանը վարձավճար փոխանցելու նպատակով, ապա բանկը պարտավորվում է մինչև տվյալ բյուջետային տարվա ավարտը ամսական հավասարաչափ մասնաբաժիններով գումար փոխանցել տվյալ ԲՈՒՀ-ին: Նշված հանձնարարականի հիման վրա (որը հնարավոր է չեղարկել բացառապես ԲՈՒՀ-ի համաձայնությամբ) ԲՈՒՀ-ը պարբերաբար ստանալու է այդ մասնակի վճարումները մինչև տվյալ տարվա ավարտը: Միակ բացառությունը պարբերական վճարումների դադարեցման հետ կապված կարող է լինել այն հանգամանքը, որ ԲՈՒՀ-ը տրամադրի տեղեկանք տվյալ սոցիալական փաթեթի շահառուին՝ վճարումների դադարեցմանը դեմ չլինելու վերաբերյալ: Ավնհայտ է, որ ԲՈՒՀ-ը նշված տեղեկանքը չի տրամադրի, եթե տվյալ անձը ունի պարտավորություն այդ ԲՈՒՀ-ին:

Հարկ է նշել նաև, որ որոշման 1-ին հավելվածի 11-րդ կետի համաձայն աշխատանքից ազատվելու դեպքում (կամ այլ պատճառով սոցիալական

փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման դեպքում), երբ աշխատողն օգտվել է սոցիալական փաթեթի ծառայությունից (ծառայություններից) և աշխատանքից ազատվելու օրվա դրությամբ ունի փոխանցման ենթակա պարտավորություններ, ապա անկախ աշխատանքից ազատվելու (կամ այլ պատճառով սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման) հանգամանքի՝ սոցիալական փաթեթի գումարները շարունակվում են փոխանցվել աշխատողի սոցիալական փաթեթի հաշվին՝ պարտավորության մարման նպատակով: Հետևաբար, նույնիսկ աշխատողի ազատվելու դեպքում սոցիալական փաթեթի շահառուի գումարները շարունակվում են փոխանցվել սոցիալաֆթեթի հաշիվը սպասարկող բանկին, իսկ բանկը շարունակում է հանձնարարագրի հիման վրա կատարել պարբերական փոխանցումները ԲՈՒՀ-ին մինչև բյուջետային տարվա ավարտը:

Նշվածից ակնհայտ է, որ վերջին կուրսի և այլ կուրսերի ուսանողների միջև մասնակի (պարբերական) վճարման տեսանկյունից որևէ տարբերություն չկա, և ԲՈՒՀ-երի պարբերական վճարումների ստացման միևնույն հնարավորության մեխանիզմը ներդրված է որոշմամբ՝ թե՛ վերջին կուրսի ուսանողների և թե՛ այլ կուրսերի ուսանողների համար: